

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոննագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոննագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

112-4(F)4

Чукчигородский

Республика Чукотка



1923

Պարկապարհեր բուռ յիշկըների միտցեք.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
• (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Կոմմունիստական ինսերտագիրների  
սեղման

477

Ծենկան — 1923

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Գ. Գ. ՑԵՐԵՎԱՆԻ  
ԿՈՄՄՈՒՆԻՍՏ



ՀԿՊ

Դ - 11

Պըսլետարներ բոլոր յիշկըների միացեք.

Վ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՍՏԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

(ՔՈԼԵՉԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

1008  
3/30/2

Կոմմունիստական ինտերնացիոնալի  
սեկցիա

34

33

Յերևան - 1923

ՀԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. ՅԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. ՅԵՐԵՎԱՆԻ

Ա. Ա. ԽՈՎՈԽՈՎԻ

Ա. Ա. Ա. ԽՈՎՈԽՈՎԻ

2001

10676-42

## I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

370/2

515-42

1. Կուսակցության անդամ՝ և համարվում ամեն վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում և նրա մի վորե և կազմակերպության մեջ, յենթարկվում է կուսակցության վորոշումներին ու անդամավճար տալիս:

2. Նոր անդամներն ընդունվում են կուսակցության այն թեկնածուների թվից, վորոնք անցել են քաղաքական գրագիտության դպրոցը և սահմանված թեկնածվական ստաժը:

Թեկնածուներին կուսակցության անդամ ներ ընդունելու կօրոքը հետեւվալն և,  
ա. Սահմանվում է յերեք կատեգորիա՝

1. բանվորներ և կարմիր բանակայիններ՝  
բանվորներից և գյուղացիններից, 2. գյու-  
ղացիններ (բացի կարմիր բանակայիններից)  
և տնայնագործներ, վորոնք չեն շահագոր-  
ծում ուրիշի աշխատանքը և 3. մյուսները  
(ծառայողներ և այլն):

թ. 1-ին և 2-րդ կատեգորիային պատկա-  
նող անձնավորություններին կուսակցու-  
թյան միջընդունելու համար անհրաժեշտ են 3  
տարվա ստաժ ունեցող կուսակցության 3  
անդամի յերաշխավորությունը. 3-րդ կա-  
տեգորիային պատկանողների համար՝ 5  
տարվա կուսակցական ստաժ ունեցող 5  
անդամի յերաշխավորությունը:

**Ծանօթություն.** Յերաշխավորողնե-  
րը պատասխանատու յեն իրենց յե-  
րաշխավորության համար, և անհինն  
յերաշխավորություններ տալու դեպ-

քում յենթարկվում են կուսակցական  
պատժի, մինչև իսկ կուսակցության  
շարքերից գուրս վտարվելուն:

գ. Նախ քան ընդունելության անց-  
նելը, տեղային կուսակցական կոմիտեն  
ստուգում ե յերաշխավորությունները:

դ. Կուսակցության մեջ մտնելու հար-  
ցը կանխորոք քննության և առնվաւմ բը-  
ջիջի կողմից, վճռվում և կազմակերպու-  
թյան ընդհանուր ժողովում և ուժի մեջ ե  
մտնում կուսակցական կոմիտեի հաստատու-  
մից հետո, ըստ վորում, — 1-ն կատեգորիայի  
համար հաստատում ե գավառային կոմիտեն,  
իսկ 2-րդ և 3-րդ կատեգորիայի համար՝  
նահանգական կոմիտեն:

Քաղաքների շրջանային (районների)  
կազմակերպություններում 1-ին կատեգո-  
րիայի նկատմամբ կայացրած ընդհանուր

ժողովի վորոշումները համարվում են վերջ-  
նական:

ե. Այլ կուսակցություններից դուրս  
յիկածները ընդունվում են 5 տարվա կու-  
սակցական ստաժ ունեցող 5 անդամի յե-  
րաշխավորությամբ և անկախ ընդունվողի  
սոցիալական գրությունից անհրաժեշտ ե  
անպայման նահանգական կոմիտեի հաստա-  
տումը:

գ. Մինչև 20 տարեկան հասակ ունե-  
ցող յերիտասարդությունը ներառյալ (բա-  
ցառությամբ միմիայն կարմիր բանակա-  
ցիների) կուսակցության մեջ ընդունվում  
է միմիայն կոմ.Յերիտ. Միության միջոցով)

Յանոքություն. — (12-րդ համա-  
գումարի վորոշումներից):

ա. Մի տարի ժամանակով (մինչև  
կուսակցության XIII-րդ համագու-

մարզ) դյազգահի վրա (յ տանկա)  
աշխատող արդյունաբերական բան-  
վորների համար յերաշխավորողների  
թիվը դարձնել 3 հոգուց 2 հոգի, յեր-  
կու տարվա կուսակցական ստաժով:  
Այդպիսի կարգ սահմանել նաև բան-  
վորներից և գյուղացիներից դուրս յեկած  
կարմիր բանակացիների համար:

բ. Ռ. Կ. Յե. Միության յերկու  
տարվա արտադրողական ստաժ ունե-  
ցող բանվոր անդամներին Ռ. Կ. Կ. Ն  
մեջ ընդունելու համար անհրաժեշտ ե  
յերեքամյա կուսակցական ստաժ  
ունեցող մի անդամի յերաշխավորու-  
թյունը և Ռ. Կ. Յե. Մ. տեղային  
կոմիտեյի դրական յեղբակացու-  
թյունը:

գ. Վոչ բանվորներին կուսակցու

թյան մեջ ընդունելու համար թողնելով կանոնադրության այդ առթիվ սահմանված պայմանները, նահանգական կոմիտեները հատուկ պատասխանատվությամբ անպայմանորեն պարտավորվում են կանոնադրությանդրան վերաբերյալ բոլոր պահանջները խստիվ կերպով ի կատար ածել:

դ. 1923 և 24 թ. թ. (մինչև կուսակցության XIII-րդ համագումարը) թեկնածուների թվից կուսակցության անդամ փոխադրել միմիայն գաղգյահի վրա աշխատող այդյունաբերական բանվորներին, մնացած բոլոր թեկնածուներին թողնել ես մի տարի այն նպատակով, վորպեսզի վերջիներիս հնարավորություն տրվի նախորդ ստանալու իրասակցական ան-

հրաժեշտ պատրաստականություն։  
3. Վորևէ կազմակերպության յուրաքանչյուր մի անդամ կուսակցության մի այլ կազմակերպության աշխատանքի շըրջանը տեղափոխվելիս, համարվում ե այդ կազմակերպության անդամ և հաշվի ե առնվում այնտեղ։

**Պահորություն 6.**—Նահանգի սահմաններում կատարվող տեղափոխությունները կարող են կատարվել միմիայն նահանգական կոմիտեյի համաձայնությամբ։ Մի նահանգից մի այլ նահանգ կատարվելիք տեղափոխությունները տեղի յեն ունենում համաձայն կուսակցության կենտրոնական կոմիտեյի սահմանած կանոնների։

4. Կուսակցությունից վորևէ մեկին

հեռացնելու հարցը վորոշում ե կամ այն կազմակերպության ընդհանուր ժողովը, վորի անդամ ե տվյալ տնհատը, կամ թե Նահանգական Վերսառուղիչ Հանձնաժողովը։ Դուրս անելու մասին կայացած վորոշումը բաժին մեջ ե մտնում միմիայն Նահանգական Կոմիտեյի հաստատումից հետո, ըստ վորոշում, նախ քան արտաքսումը յեղած հաստատումը, տվյալ անձնավորությունը հեռացվում ե կուսակցական աշխատանքից։

Կուսակցության շարքերից դուրս արվող անդամների մասին հայտարարվում ե կուսակցական մամուլում, մատնանշելով դուրս անելու պատճառները։

## II. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍ

5. Բոլոր նրանք, վորոնք ցանկանում

են գառնալ կուսակցության անդամ, պետք ե անցած լինեն թեկնածվական վորոշում, վորը նպատակ ունի կուսակցության ծրագրի և գործելակերպի հետ, հիմնականորեն ծանոթացնելու ու թեկնածվի անհատական հատկությունները ստուգելու համար։

6. Թեկնածուներին ընդունելու կարգը (բաժանումն կատեգորիաների, յերաշխավորությունների ընույթն ու նրանց ստուգումը, ընդունելության մասին, կազմակերպությունների հանած վորոշումը և կուսակոմի հաստատումը) բոլորովին նույնն ե, ինչ վոր կուսակցության անդամ ընդունելու կարգը։

7. Թեկնածվական ստաժը բանվորների, և գյուղացիներից ու բանվորներից դուրս յեկած կարմիր բանակայինների

համար սահմանվում ե վոչ պակտու, քան  
6 ամիս,—դյուզացիների և տնայնագործ-  
ների համար՝ 1 տարի, իսկ մյուսների հա-  
մար՝ 2 տարի:

**Ծանօթություն.**—Այլ կուսակցու-  
թյաւններից դուրս յեկածների հա-  
մար, անկախ նրանց սոցիալական  
դրությունից, սահմանվում ե 2 տար-  
վա թեկնածվական ստաժ:

8. Թեկնածուները խորհրդակցական  
ձայնի իրավունքով մասնակցում են բոլոր  
այն կազմակերպության բաց ժողովներին,  
վորի անդամ են համարվում նրանք:

9. Թեկնածուները կուսակցական սո-  
վորական անդամավճարներ են մուծում  
տեղական կուսակցական կոմիտեյի գանձ-  
արկը:

### III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ- ՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՄՔԻ ՄԱՍԻՆ.

10. Կուսակցության կազմակերպչա-  
կան կառուցվածքի, վորպես դեկավար, ըս-  
կըզբունք,—հանգիսանում ե Պեմոկրատա-  
կան կենտրոնացումը (демократический цент-  
рализм):

11. Կուսակցությունը կառուցվում ե  
գեմոկրատական կենտրոնացման հիմունք-  
ներով, ըստ տերիտորյալ հատկանիշի.  
Վորեկ շրջանի պետքերի համար հիմնված  
կազմակերպությունը համարվում ե այդ  
շրջանի մասերը տնօրինող բոլոր այլ կազ-  
մակերպությունների գլխավոր մարմինը:

12.Տեղային հարցերի վորոշման շըր-  
ջանակում կուսակցական կազմակերպու-  
թյունները ինքնավար են (автономны):

13. Յուրաքանչյուր մի կազմակերպության ամենաբարձր զեկավար մարմինը հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը:

14. Բնդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը ընտրում է մի կոմիտե, վորը՝ ներկայանում և վորակու գործադիր մարմին և զեկավարում և տեղական կազմակերպության ընթացիկ աշխատանքները:

15. Կուսակցության կազմակերպչական սինկերան հետեւյալն է.

ա. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության անդիտորիայում — Համառուսական համագումար, կենտրոնական կոմիտե.

բ. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության մեջ մտնող ըրջաններում և խոշիրգային հանրապետություններում, — կենտրոնական

կոմիտեյի ըրջանային բյուրոներ (կամ թե ազգային կոմկուսների ըրջանային (օբластն.) կոնֆերենցիաներ և համագումարներ — ազգային կոմկուսների կենտրոնական կոմիտեներ և ըրջանային կոմիտեներ):

գ. Նահանգներում — նահանգային կոնֆերենցիաներ, համագումարներ — նահանգական կոմիտեներ:

դ. Գավառներում — գավառային կոնֆերենցիաներ, համագումարներ — գավառային կոմիտեներ:

յ. Վիճակներում (волости) — վիճակային ժողովներ — վիճակային կոմիտեներ:

զ. Զեռնարկներում, գյուղերում, կարմիր բանակային մասերում, հաստատություններում — բջիջների ընդհանուր ժողովներ, բջիջների բյուրոներ:

16. Հաշվետվության յենթարկման

(подчинение отчетности) և կուսակցական բոլոր գորոշումների հերքման կարգը հետևյալն է (բարձր ինստանցիայից դեպի ըստորին). — Կենտկոմի համառուսական համագումար, շրջանային (օblastn.) կոնֆերենցիա, Շրջանային կոմիտե, նահանգային կոնֆերենցիա և այլն:

17. Կուսակցական յուրահատուկ աշխատանքների համար կազմակերպվում են առանձին բաժիններ (աղքային, կանանց մեջ աշխատանք վարող բաժիններ և այլն). Այդ բաժինները կից են կոմիտեներին և անմիջականորեն յենթարկվում են նրանց բաժինների կազմակերպման կարգը գորոշվում և Կենտրոնական կոմիտեյի կողմից հաստատված առանձին հրահանդներով:

18. Բոլոր ստորին կազմակերպությունները մինչև գավառայինները՝ հաս-

տատվում են գավառային կոմիտեյի կողմից, նահանգական կոմիտեյի թույլտվությամբ, գավառայինները՝ նահանգական կոմիտեների կողմից Շրջանային (օblastn.) կոմիտեների թույլտվությամբ, իսկ վերջինքան բացակայության դեպքում՝ կենտրոնական կոմիտեյի թույլտվությամբ. Նահանգայինները՝ Շրջանային կոմիտեների կողմից կենտրոնական կոմիտեներուն կան կոմիտեյի թույլտվությամբ, իսկ Շրջանայինի բացակայության դեպքում՝ անմիջականորեն կենտրոնական կոմիտեյի թույլտվությամբ:

Յուրաքանչյուր մի կազմակերպություն վերջնական հաստատումից հետո իրավունք ունի ունենալու յուր կնիքը, բայց միմիայն կուսակցության համապատասխան Բարձրագույն Մագիստրությունը պահպանություն ունենալուց հետո:

## IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

20. Կուսակցության գերագույն մարմինը հանդիսանում է համագումարը։ Հերթական համագումարները հրավիրվում են տարեկան մեկ անգամ։ Արտակարգ համագումարները հրավիրվում են կենտրոնական կոմիտեյի անմիջական նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համագումարին մասնակցող անդամների ընդհանուր թվի <sup>1/3</sup>-ի պահանջով։ Կուսակցական համագումարի հրավիրումն, ինչպես և որտակարգի խնդիրների մասին՝ հայտարարվում է վոչուշ, քան համագումարի բացումից մեկ ու կես ամիս առաջ։

Արտակարգ համագումարը հրավիրվում է 2 ամսվա ժամանակմիջոցում։ Համագումարը

որինական է համարվում, յեթե ներկա յեղողների թիվը կազմում է վերջին ներթական համագումարի թվի կեսից վոչ պակաս։ Համագումարի ներկայացուցչական չափերը (նորմաները) սահմանվում են կենտրոնական կոմիտեյի և նախահամագումարյան հերթական կոնֆերենցիայի կողմից։

21. Յեթե 20-րդ կետում ցույց տված ժամանակամիջոցի ընթացքում կենտրոնական կոմիտեյի կողմից արտակարգ համագումար չի հրավիրվում, այն ժամանակ արտակարգ համագումար պահանջող կազմակերպությունները իրավունք ունեն ստեղծելու կազմակերպչական կոմիտե, վորը մինչև համագումարի հրավիրումը ոգտվում է կենտրոնական կոմիտեյի բոլոր իրավունքներով։

22. Համագումարը. ա. լսում ու համատում ե կենարոնական կոմիտեյի վերահսկիչ հանձնաժողովի և այլ կենարոնական հաստատությունների հաշվեավությունները. բ. մերաքննում ու փոփոխում ե կուսակցության ծրագիրը. գ. վորոշում ե ընթացիկ հարցերի նկատմամբ կուսակցության գործելու կերպի ուղղությունը. դ. ընտրում ե կենարոնական կոմիտե, վերահսկիչ հանձնաժողով և այլն:

23. Կենարոնական կոմիտեն ընտրվում և համագումարից վորոշված կազմով:

Կենարոնական կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում, նրա կազմը լրացվում է համագումարում ընտրված թեկնածուներից, համաձայն համագումարի ցույց տված կարգի:

24. Այլ կուսակցությունների և հիմ-

նարկությունների հետ հարաբերությունների մեջ մանել կարող ե միմիայն կենարոնական կոմիտեն: Կենարոնական կոմիտեն կազմակերպում ե կուսակցական զանազան հաստատություններ, զեկավարելով նրանց գործնեությունը, կենարոնական որգանների համար. նշանակում, և խմբագրական կազմ վորն, աշխատում ե կենարոնական կոմիտեյի ցուցունքներով և նրա հսկողության տակ, կազմակերպում ե զանազան ընդհանուր կուսակցական ընույթ կրող ձեռնարկություններ, կուսակցության ուժերի և միջոցների բաժանումն ե կատարում և անորինում ե կենարոնական գանձարկողը:

Խորհրդային և հասարակական կենարոնական կազմակերպությունների աշխատանքներին կենարոնական կոմիտեն կու-

սակցական ֆրակցիաների միջոցով տոն և  
ուղղություն ե տալիս:

Կենտրոնական կոմիտեն վոչ պակաս,  
քան 2 ամիսը 1 անգամ ունենում ե լիա-  
կազմ (պլենար) նիստ: Կենտրոնական կո-  
միտեյի թեկնածուները ներկա յեն լինում  
լիակազմ նիստերին խորհրդակցական ձայ-  
նով:

25. Քաղաքական աշխատանքների ղե-  
կավարության համար Կենտրոնական կո-  
միտեն ստեղծում ե քաղաքական բյուրո,  
կազմակերպչական աշխատանքների ընդհա-  
նուր ղեկավարության համար՝ 5—7 ան-  
գամներից բաղկացած կազմակերպչական  
բյուրո, իսկ կազմակերպչական ու գործա-  
դիր ընույթ կրող ընթացիկ աշխատանքնե-  
րի համար ընտրվում ե 3 հոգուց բաղկա-  
ցած մի քարտուղարություն Կենտրոնական

կոմիտեյի այն անդամներից, վորոնք մըշ-  
տապես աշխատելու յեն քարտուղարու-  
թյան մէջ:

26. Կուսակցական համագումարների  
միջնթացքում, տարեկան մեկ անգամ,  
Կենտրոնական կոմիտեն հրավիրում է հա-  
համառուսական կուսակցական կոնֆերեն-  
ցիա, կուսակցության յերկրային, շրջանա-  
յին (օblastն.) և նահանգական ներկայացու-  
ցիչներից, ազգային կոմկուսների կենտրո-  
նական կոմիտեյի, Շրջանային կոմիտեների,  
հարմիր բանակի և նավահարմի քաղաքա-  
կան բաժիններից:

27. 2 ամիսը մեկ անգամ Կենտրոնա-  
կան կոմիտեն յուր գործնեյո թյան մա-  
սին ուղարկում ե բոլոր նահանգական կո-  
միտեներին գրավոր հաշվետվություն:

28. Կենտրոնական վերահսկիչ Հան-

ձնաժողովը բազեացած է 3 անդամից, վորոնց կուսակցական ստաժը պետք է լինի վոչ պակաս 10 տարվանից:

Կենտրոնական վերահսկիչ Հանձնառժողովը վերահսկում է. ա. կուսակցական կենտրոնական մարմիններում ընթացող գործերի արագությունն ու ճշտությունը և Ռ. կ. կ. կ. քարտուղարության ազգային կարգավորման վրա. թ. թ. կ. կ. կ. գանձարկղն ու զանազան ձեռնարկությունները:

## V. ԵՐԶԱՆԱՅԻՆ (օբլաստն.) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

29. Կուսակցական կողմակերպությունները թ. կ. կ. կ. կ. թույլտվությամբ կարող են միացվել ըստ շրջանների. շրջանների սահմանները վորոշում են շրջանային

(օբլաստն.) կոնֆերենցիալում և հաստատվում կենտրոնական կոմիտեյի կողմից:

30. Ռ. Ս. Ֆ. Ֆ. Հ. Հ. Փեղերատիվ տերիսորյալ մասերին սպասարկող (օբելյաշայուղ) կուսակցական կազմակերպությունները իրավահավասարվում են շրջանային (կամ նահանգական) կազմակերպություններին, այսինքն ամբողջապես յենթարկվում են թ. կ. կ. կ. կ. կոմիտեյին:

31. Շրջանային կոմիտեն (կամ ազգային կոմիտեի կենտրոնական կոմիտեն) ընտրվում է շրջանային (կամ ազգային կոմիտեի) կոնֆերենցիալում, համագումարում:

Կենտրոնական կոմիտեյի հատուկ վորոշմամբ այնտեղ, վորտեղ գոյություն ունեն շրջանային տնտեսական մարմիններ (տնտեսական խորհուրդներ և այլն) կամ

կենտրոնից զգալիորեն հեռու ընկած վայրերում, ստեղծվում են Ռ. Կ. Կ. Կոմիտեյի կողմից նշանակված շրջանային բյուրոներ:

Այդ բյուրոների կազմը ամեն մի առանձին դեպքում վորոշվում է կենտրոնական Կոմիտեյի կողմից, կենտրոնական Կոմիտեյի շրջանային բյուրոները պատրախանառու յեն միմիայն Ռ. Կ. Կ. Կոմիտեյի առաջ:

32. Շրջանային հերթական կոնֆերենցիան (կամ ազգային կոմիտեի համագումարը) հրավիրվում է Շրջանային Կոմիտեյի (կամ ազգային կոմիտեի կենտրոնական Կոմիտեյի) կողմից և ամիսը 1 անգամ։ Այս ժամանակամիջոցը առանձին շրջանների համար Ռ. Կ. Կ. Կոմիտեյի թույլտվությամբ կարող է յերկարել մին-

չե մի տարի։ Արտակարգ համագումարը հրավիրվում է շրջանային (օblastn.) Կոմիտեյի (կամ ազգային կոմիտեի կենտրոնական Կոմիտեյի) վորոշմամբ կամ շրջանում հաշվող կազմակերպություն անդամների ընդհանուր թվի կիսի ներկայացուցչության պահանջմամբ։

Շրջանային (կամ ազգային կոմիտեի համագումարի) կոնֆերենցիայի ներկայացուցչական նստման սահմանվում է շրջանային Կոմիտեյի (կամ ազգային կոմիտեի կենտրոնական Կոմիտեյի) կողմից, այդ շրջանի մեջ մտնող նահանգական Կոմիտեների համաձայնությամբ։

Շրջանային կոնֆերենցիան (կամ ազգային Կոմիտեի համագումարը) լսում և հաւատագում է շրջանային (կամ ազգային) Կոմիտեի Կ. Ա. Բ. Վերահսկիչ Հանձնաժողով

զովի և ուրիշ շրջանային հաստատությունների հաշվետվությունները։ Բնտրում և Շրջանային կոմիտե և Վերահսկիչ Հանձնաժողով (Կենտրոնական կոմիտե և աղդային կոմկուսի Վերահսկիչ Հանձնաժողով):

33. Շրջանային կոմիտեն ընթացիկ աշխատանքների համար կազմակերպում և 5 հոգուց վոչ պակաս բաղկացած բյուրո։

Շրջանային կոմիտեն (Կենտրոնական կոմիտեյի շրջանային բյուրոն) կազմակերպում ու հիմնում և շրջանի սուհմաններուակուսակցության գանազան հաստատություններ, զեկավարում և վերջիններիս գործնեյությունը, նշանակում և շրջանային կուսակցական որդանի խմբագլություն, վորն աշխատում և նրա անմշական հսկողության ներքո, կազմակերպում և վարում և շրջանի համար ընդհանուր

նշանակություն ունեցող զանազան ձեռնարկություններ, շրջանի սահմաններում կուսակցության ուժերի ու միջոցների բաշխումն և կատարում և տնօրինում և շրջանային գանձարկղը։ Շրջանային կոմիտեն (Կենտրոնական կոմիտեյի շրջանային բյուրոն) խորհուրդների գանազան գործադիր մարմինների գործունեյությանը ուղղություն և տալիս կուսակցական ֆրակցիաների միջոցով և ամեն ամիս կենտրոնական կոմիտեյին հաշվետվություն և ներկայացնում յուր գործնեյության մասին։

Շրջանային կոմիտեն (Կենտրոնական կոմիտեյի շրջանային բյուրոն) գումարվում և վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ։ V. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

34. Նահանգական կոմիտեյի կողմից

հերթական կուսակցական կոնֆերենցիան  
հրավիրվում է 6 ամիսը 1 անգամ, իսկ  
արտակաբը՝ հրավիրվում է Նահանգա-  
կան կոմիտեյի կամ նահանգի մեջ հաշվող  
կազմակերպության անդամների ընդհանուր  
թվի 1/3-ի վորոշմամբ։ Նահանգական  
կոնֆերենցիան լսում է հաստատում  
և Նահանգական կոմիտեյի, Վերահսկիչ  
Հանձնաժողովի և նահանգական այլ հաս-  
տառությունների հաշվեավությունները.  
ընտրում է Նահանգական կոմիտե և Վերա-  
հսկիչ Հանձնաժողով։

35. Նահանգական կոմիտեն ընտրվում  
է կոնֆերենցիայի կողմից, ըստ վորում  
նրա կազմի մեջ պետք է մասնեն ինչպիս-  
նահանգական, նույնպես և նահանգի խո-  
շը կենտրոնների աշխատակից ընկերներ։  
Նահանգական կոմիտեն հավաքվում է

վոչ ուշ, քան ամիսը 1 անգամ։ Նահանգա-  
կան կոմիտեն ընթացիկ աշխատանքների  
համար կազմում է 5 հոգուց բաղկացած մի  
բյուրո, ըստ վորում այդ թիվը անհրա-  
ժեշտության դեպքում կարող է մեծանալ  
միմիայն կենտրոնական կոմիտեյի համա-  
ձայնությամբ (իսկ շրջաններում՝ շրջանա-  
յին կոմիտեյի) (օճ. ԷՕՄ-Դ.) համա-  
ձայնությամբ։

Բյուրոյի կազմից 3 անգամ նվիր-  
վում են միմիայն կուսակցական աշխա-  
տանքների։

Նահանգական կոմիտեյի քարտուղա-  
րի համար պարտադիր է մինչ, հոկտեմբեր-  
յան հեղափոխության կուսակցական ստաժ,  
վորը պիտի հաստատված լինի Բարձրա-  
դույն կուսակցական Մարմի կողմից (և մի-  
այն այդ բարձրագույն մարմինը կարող է

փոփոխություն կատարել ստաժի նկատմամբ):

36. Նահանգական կոմիտեն Շրջանային կոմիտեյի կամ Կենտրոնական կոմիտեյի թույլտվությամբ հաստատում և Նահանգի գավառային կամ ռայոնական (շրջանային քայլօնական) կազմակերպությունները, նահանգի սահմաններում կազմակերպում և կուսակցության գանագան հաստատություններ, դեկավարում և նրանց գործնեյությունը, կուսակցական շրջանի համար խմբագրություն և նշանակում, վորության ամսատեղու յե նրա անմիջական հսկողության տակ, կազմակերպում և նահանգի համար ընդհանուր նշանակություն ունեցող գանագան ձեռնարկություններ, նահանգի սահմաններում կուսակցության ուժերի ու միջոցների բաշխումն և կատա-

րում և տնօրինում և նահանգային գանձարկը:

Նահանգային կոմիտեն նահանգային խորհրդի, արհեստակցական միությունների գործնեյությանը՝ համապատասխան կուսակցական ֆրակցիաների միջոցով տոն և ուղղություն և տալիս:

Յուրաքանչյուր ամիս Նահանգական կոմիտեն յուր և գավառային կոմիտեների գործնեյության մասին հաշվետվություն և ներկայացնում ենուարոնական կոմիտեյին:

Ինքնակար (ավտոնոմ) շրջանների կոմիտեները իրավահավասար են Նահանգական կոմիտեներին:

37. Նահանգական կոմիտեները իրնքերինցիաների միջև յեղած ժամանակաշրջանում իրենց տարած աշխատանքների մասին պարբերաբար, քաղաքային կազմա-

կերպության կոնֆերենցիային կամ ընդհանուր ժողովներում, ինչորմացիոն գեկուցումներ են տալիս: Բացի այդ, Նահանգական Կոմիտեները վոչ ուշ, քան 3 ամիսը 1 անգամ իրենց անմիջապես յենթարկվող գավառային, վիճակային ներկայացուցիչներից խորհրդակցություն են հրավիրում:

38. Նահանգական քաղաքներում, կարիք զգացված գեղըում, կազմվում են շըրջանային (բայոն.՝) կազմակերպություններ՝ գավառային կոմիտեներին վերագրված իրավունքներով, վորոնք անմիջականորեն յենթարկվում են Նահանգական կոմիտեյին:

## VII. ԳԱՎԱՌՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

39. Գավառային կոնֆերենցիան լր-

ում և հաստատում է գավկոմի, գավառային վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ընտրում է կոմիտե և վերահսկիչ հանձնաժողով:

Կոնֆերենցիան հրավիրվում է ամեն 6 ամիսը 1 անգամ:

40. Գավառային կոմիտեն ընտրվում է գավառային կուսակցական համագումարում, 7—9 անգամի կուզմով:

Գավառային կոմիտեն իր կողմից ընտրում է մի բյուրո 3 հոգուց բաղկացած, վորոնցից 2-ը բոլոր աշխատանքներից ազատվելով ամրողապես նվիրվում են կուսակցական աշխատանքի:

Բարտուղարն անպայման պետք է ունենա 3 ամյա կուսակցական ստաժ և կուսակցության Բարձրագույն Մարմարի հաստատումն (ստաժը կարող է փոփոխվել բա-

ցառիկ գեղքում. կուսակցության Բարձրագույն Մարմնի կողմից):

41. Գավառային կոմիտեն Նահանգական Կոմիտեյի թույլավությամբ հաստատում և գավառի վիճակային կազմակերպություններն ու բջիջները, գավառի սահմաններում հիմնում և կուսակցության գանագան հաստատություններ, գավառի համար ընդհանուր նշանակություն ունեցող գանագան ձեռնարկություններ և կազմակերպում, զեկավարում և նրանց գործունեությունը, 3 ամիսը մեկ անգամ հրավիրում և խորհրդակցություն՝ մասնակցությամբ վիճակային (ՎՈԼОСՏԻ) բջիջների ներկայացուցիչների և տնօրինում և կուսակցության գավառային գանձարկում:

**Թանօրություն.**—Գավառում կուսակցական որդանի կամ դրականու-

թյան հրատարակության իրավունքը վերապահվում է միայն գավառային կոմիտեյին (Նահանգական կոմիտեյի թույլավությամբ):

42. Գավառային կոմիտեն գավառի սահմաններում, կուսակցական ֆրակցիայի միջոցով տոն և ուղղություն և տալիս գավառությունի, ինչպես և արհեստակցական, կոռուպերատիվ և այլ կազմակերպությունների գործներությանը:

### VIII. ՎԻՃԱԿԱՅԻՆ (ՎՈԼՈՍՏԻ). ԿԱԶ-ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

43. Վիճակում, կուսակցության բարձրագույն մարմններ հանդիսանում և տվյալ վիճակի կուսակցական անդամների ընդհանուր ժողովը:

**Թանօրություն.**—Վիճակում, վոր-

աեղ ընդհանուր ժողովներ դժվար և  
ճրավիրել, թույլատրվում ե ընդհանուր  
ժողովները փոխարինել վիճակային  
կոնֆերենցիաներով:

44. Վիճակի ընդհանուր ժողովը գուշաբիում ե վոչ սակավ,քան ամիսը մեկ անգամ: Ընդհանուր ժողովը՝ ա. վորոշում և կուսակցության միջ ընդունելու և գույս անելու վերաբերյալ հարցեր և այդ առթիվ կայացած վորոշումները միաժամանակ ներկայացնում ե Բարձրագույն Կուսակցական մարմիններին ի հաստատություն, բ. ընտրում ե վիճակային կոմիտե, գ. քննում ու հաստատում և վիճակային կոմիտեյի հաշվետվությունը, դ. ընտրում ե պատգամավորներ նահանգական, գավառային և այլ կոնֆերենցիաների համար, ե. քննում ու հաստատում է վիճակային գործադիր կոմիտեյի ֆրակցիայի հաշվետվությունը:

45. Վիճակային կոմիտեն ընտրվում ե ընդհանուր ժողովում կամ կոնֆերենցիայում Յ-ից 5 հոգի կազմով, 3 ամիս ժամանակով:

46. Վիճակային կոմիտեն ուղղություն ե տոն և տալիս վիճակում գտնվող բոլոր կազմակերպությունների աշխատանքներին, զեկավարում է այն, ցուցակագրում ե կուսակցության բոլոր անդամներին, կազմակերպում է գրականության տարածումը, (միտինգներ, գասահոսություններ և այլն), կազմակերպում է նոր ըջիջներ, ներկայացնելով նրանց ի հաստատություն գավառային կոմիտեյի, անորինում և վիճակի կուսակցության գանձարկղը, ամիսը 1 անգամ գավառային կոմիտեյին ե ներկայացնում յուր գործունեության մասին հաշվետվություն, կուսակցական ֆրակցիայի միջոցով

տոն և ուզգություն և տալիս վիճակային  
գործադիր կոմիտեյի աշխատանքներին:

## IX. ԿՈՒՍԱԿՑԱՎԱՆ ԲԶԻՉՆԵՐԻ ՄԱ- ՍԻՆ.

47. Կուսակցական կազմակերպության  
հիմքն ե կազմում կուսակցական բջիջը.  
բջիջը կազմվում է սայոնական կամ գա-  
վառային կոմիտեյի հաստատությամբ. վո-  
րի կազմը պակաս չպետք ե լինի Յ անդա-  
մից:

48. Բջիջն այն կազմակերպությունն  
է, վորը տվյալ վայրում կապում, միաց-  
նում և բանվորա-գյուղացիական մասսանե-  
րին կուսակցության զեկավար մարմնի հետ:  
Բջիջի նպատակն ե՝ 1. կուսակցության լո-  
գունակներն ու վորոշումներնանցկացնելը մաս-  
ուաներում 2. նոր անդամների պրայիլը; 3.

աջակցություն ցույց տալ տեղական կոմիտե-  
յին նրա կազմակերպչական և ազիտացիոն  
աշխատանքներում. 4. վորպես կուսակցական  
որդան՝ ունենալու գործոն մասնակցու-  
թյուն յերկրի տնտեսական և քաղաքական  
կյանքում:

49. Բնթացիկ աշխատանքները վա-  
րելու համար բջիջը Յ հոգուց բաղկացած  
մի բյուրո յե ընտրում Յ ամիս ժամա-  
նակով:

Բջիջի քարտուղարը պարտադիր ե  
ունենալ վոչ պակաս, քան մեկ տարվա  
կուսակցական ստաժ:

Բացառությունները թույլատրվում են  
միայն գավառային կոմիտեյի (կամ ուայ-  
նական կոմիտեյի) սանկցիան ստանալուց  
հետո:

## X. ՎԵՐՍՈՒԳԻՉՆԱՄՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

50. Կուսակցության միության ու հեղինակության ամրացմանը նպաստելու համար կենտրոնում, շրջաններում (օblastъ), թե նահանգներում,—համագումարներուակամ շրջանային ու նահանգային կոնֆերենցիաներում,—ընտրական ճանապարհով կազմակերպվում են վերստուգիչ հանձնաժողովներ, վորոնք իրենց գործունեության համար հաշվետույին իրենց ընտրող համապատասխան կուսակցական մարմինների առաջ: Վերստուգիչ հանձնաժողովները կենտրոնում ընտրվում են տասը տարվա կուսակցական ստաժ ունեցող 5 անդամի և 2 թեկնածվի կազմով, շրջաններում՝ 3-ից—5 անդամի և 2-ից—3 թեկնածվի կազմով, նահանգներում՝ 3 անդամի և 2 թեկնածվի

(մինչև փետրվարյան հեղափոխությունն կուսակցական ստաժ ունեցող) կազմով:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն խորհրդակցական ձայնով մասնակցելու համապատասխան կուսակցական կոմիտեների բոլոր նիստերին և կուսակցական կազմակերպությունների զանազան խորհրդակցություններին:

Վերստուգիչ հանձնաժողովների վորոշումները չեն. կարող փոփոխության յենթարկվել համապատասխան կուսակցական կոմիտեների կողմից, բայց ուժ են ստանուած միմիայն նրանց փոխադարձ համաձայնությամբ ու ապա կիրառվում կյանքում:

Անհամաձայնության դեպքում խընդուրը փոխադրվում է միության նիստի քննությանը:

Յեթե կոմիտեյի հետ համաձայնություն չի կայանում, ապա հարցը դրվում է համապատասխան կուսակցական կոնֆերենցիային կամ վերստուգիչ հանձնաժողովին:

**Փանորություն.Կենտրոնական կոմիտեյի շրջանային (областной) բյուրոներին կից վերստուգիչ հանձնաժողով չի կազմվում. նաև անգամական վերստուգիչ հանձնաժողովի վորոշումնայն գեպքում, յեթե նրա գեմ առարկություն կամ բողոք կա, կենտրոնական կոմիտեյի շրջանային բյուրոյի յեղբակացության հետ միասին, հանձնվում է կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովին:**

## XI ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ (ԴԻՍՏԻՊԼԻՆԱՅԻ) ՄԱՍԻՆ.

51. Կուսակցության բոլոր անդամների

և բոլոր կուսակցական կազմակերպությունների համար կուսակցական խստիվ կարգապահությունը (стражайшая дисциплина) նրանց առաջնագույն պարտականությունն է: Կուսակցական կենտրոնների վորոշումները պետք ե անհապաղ և ճշգրիտ կերպով ի կատար ածվեն. միենույն ժամանակ կուսակցության ներսում կուսակցական կյանքի վերաբերյալ բոլոր վիճելի հարցերի քննությունը միանգամայն ազատ ե համարվում, քանի գեռ նմանողինակ հարցերի նկատմամբ վորոշումներ չեն ընդունվել:

52. Յերբ կուսակցության բարձրագույն կազմակերպությունների վորոշումները չեն կիրառվում կամ ավելի ստորադաս կազմակերպությունների կողմից տեղի յեն ունենում կուսակցության հասարակական կարծիքի տեսակետից, հանցավոր և

որինազանց քայլեր, այդպիսի գեղքերում, ըստ կայացած հանցանքի շափի ավելի բարձր կազմակերպությունների կողմից նրա կատողություն և արվում կամ ժամանակավոր նոր կոմիտե ընտրվում, և կոմ տեղի ունենում ընդհանուր վերացուցակագրություն (Կազմակերպության ցրումն)։ Իսկ առանձին ընկերների նկատմամբ՝ կուսակցական նկատողություն, հրապարակավ նկատողություն, ժամանակավոր հեռացումն կուսակցական խորհրդային պատասխանառու աշխատանքներից և կուսակցության շարքերից արտաքսումն (հայտնելով դատական և վարչական իշխանություններին արտաքավճի հանցանքի մասին)։

Կուսակցության անդամությունից թեկնածու փոխադրումն, վորպես կուսակցական պատժի միջոց, չի թույլատրվում։

53. Դիսցիպլինայի նկատմամբ կատարված պարտազանցությունները սովորական կարգով, ըստ սահմանված ինստանցիաների, քննության են առնվում կոմիտեներում, ընդհանուր ժողովներում և Վերասուդիչ Հանձնաժողովներում։

## XII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

54. Կազմակերպության դրամական միջոցներն են կազմում անդամավճարները, բարձրագույն կուսակցական Կազմակերպություններից ստացած նպաստներն ու այլ հասույթներ։

55. Կուսակցության անդամների և թեկնածուների համար անդամավճարը սահմանվում է վոչ պակաս քան աշխատավարձի կես տոկոսը ըստ աշխատավարձի չա-

փի տարբերումների; սահմանվում է անդամավճարի 4 կատեգորիա. 1-ին կատեգորիան վճարում է կես տոկոս, 2-ը՝ մեկ տոկոս, 3-ը՝ 2 տոկոս, 4-ը՝ յերեք տոկոս: Հարկատու աշխատավարձերի բացարձակ թվերը սահմանվում են հրահանգներով:

56. Նրանց համար, վորոնք ստանում են անորոշ աշխատավարձ, — որինակ՝ գյուղացիների համար անդամավճարի քանակը սահմանվում է նահանգական կոմիտեյի կողմից, հարմարեցնելով այն կենտրոնական կոմիտեյի հրահանգին:

57. Անդամավճար մուծելուց միանգամայն ազտավում են գործազուրկները ու սոցիալական ապահովությունից ոգտվողները (հաշմանդամները, ծերունիները և աշակերտները):

58. Ազգբնական վճարները (ՎԵՐԱ).

ՅՅՈԾԵՑ) գանձվում են ինչպես կուսակցության անդամներից, նույնպես և թեկնածուներից, աշխատավարձի 3 տոկոսի չափով, վոչ վոք այդ վճարից չի ազատվում:

59. Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք մինչև յերեք ամիս առանց հարգելի պատճառների չեն մուծել անդամավճարներ, համարվում են կուսակցության շարքերից հեռացված, վորի մասին հայտնվում է ի դիտություն ընդհանուր ժողովի:

### XIII. ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

60. Բոլոր անկուսակցական համագումարներում, խորհրդակցություններում և գնարակներում ոչ անն՛ ուում (նոր հուրդներ

րում, խորհուրդների գործադիր կոմիտեներում, արհմիությունների կոմիտեներում և խորհուրդներում, կոռալերատիվների վարչություններում (այլն), վորտեղ կան վոչ պակաս, քան կուսակցության 3 անդամներ, — կազմվում են ֆրակցիաներ, վորոնց նպատակն են կուսակցության աղքեցությունը բազմակողմանի ուժեղացնել անկուսակցական միջավայրում, կուսակցության քաղաքականությունը կիրարել և բոլոր վերոհիշյալ հաստատությունների ու կազմակերպությունների աշխատանքների վրա կուսակցական հսկողություն ունենալ:

61. Յերբ կոմիտեյում քննվում են մը վորեւ և ֆրակցիայի վերաբերյալ հարցեր, վերջինս խորհրդակցական ձայնով իր ներկայացուցիչն եւ ուղարկում համապատասխան կոմիտեյի լիակազմ (պլենար) նիստին:

Է՞նթացիկ աշխատանքների համար ֆրակցիաները կարող են ընտրել բյուրո:

62. Ֆրակցիաներն անկախ իրենց նըշանակությունից ամբողջապես յենթարկվում են համապատասխան կուսակցական կազմակերպություններին:

Բոլոր այն հարցերի նկատմամբ, վորոնց առթիվ համապատասխան կուսակցական կազմակերպությունը որինական վորոշում ե կայացրել, — ֆրակցիաները պարտավոր են անշեղ կերպով կիրառելու այն: Կոմիտեն իրավագործ և ֆրակցիայի այս կամ այն անդամին հետ կանչելու կամ նոր անդամ նշանակելու, տեղեկացնելով այդ մասին ֆրակցիային: Յուր ներքին կյանքի և ընթացիկ աշխատանքի հարցերում ֆրակցիան ինքնաւար ե:

Ֆրակցիայի վերաբերյալ վորեւ և հար-

ցի նկատմամբ կոմիտեյի և ֆրակցիայի միջև ծագած սկզբունքային տարածայնության դեպքում, կոմիտեն պարտավոր է յերկրորդ անգամ քննելու այն ֆրակցիայի ներկայացուցիչների հետ միասին և ընդունելու վերջնական վորոշում, վորն անմիջապես պետք է ի կատար ածվի ֆրակցիայի կողմից:

63. Բոլոր պատասխանատու պաշտոնների համար այն կազմակերպություններում, վորտեղ աշխատում է ֆրակցիան, թեկնածուները նշանակվում են ֆրակցիայի և համապատասխան կուսակցական կազմակերպության կողմից: Այդ նույն կարգով է կատարվում նաև փոխադրումն մի պաշտոնից մի ուրիշը:


64. Բոլոր այն հարցերը, վորոնք քաղաքական նշանակություն ունեն և յենթա-


կա յեն ֆրակցիայի քննության, պետք է քննության առնվիճ կոմիտեյի ներկայացուցչի մասնակցությամբ:

65. Ամեն մի հարց, վորը քննության և առնվում այն արտակուսակցական կազմակերպության կողմից, վորտեղ աշխատում է ֆրակցիան, — պետք է քննվի ընդհանուր ժողովում կամ ֆրակցիայի բյուրոյում:

66. Արտակուսակցական վորեւ է կազմակերպություն ֆրակցիայի կողմից ամեն մի հարցի վերաբեյալ կայացրած վորոշման առթիվ ֆրակցիայի բոլոր անդամները տվյալ արտակուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովի ժամանակ պարտավոր են միաձայն քվեարկելու:

Սույն կանոնը խախտողները սովորական կարգով յենթարկվում են դիսցիպլինար պատասխանատվության:





---

**Պատվեր № 2601**

ՀՀ ՀԿԴ  
Դ-4-21

6015443

2013

«Ազգային գրադարան»



NL0015443

